# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2018թ. ապրիլի 12-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի IVա դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Թերեզա Սամսոնյանը:

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1.Միջոցառման կազմակերպում:

2.Ընթացիկ հարցեր:

1 Լսեցին.- <<Շունն ու կատուն>> ստեղծագործության բեմականացման կազմակերպման հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Թ. Սամսոնյանը՝ նշելով, որ դպրոցում ավանդույթ է դարձել << Հեքիաթին հյուր>>խորագրով միջոցառման կազմակերպումը: II կիսամյակում IVա դասարանում որոշել է կազմակերպել միջոցառում: Քանի որ այս տարի լրանում է Հովհաննես Թումանյանի <<Շունն ու կատուն>> ստեղծագործության 130 ամյակը, առաջարկություն էր եղել բեմադրել այդ ստեղծագործությունը: Դասղեկը նշեց, որ արդեն սովորողներին բաժանել է համապատասխան դերեր: Դպրոցը տրամադրել է բեմական հագուստներ: Անհրաժեշտ է ծնողների աջակցությունը դահլիճի բեմը կահավորելու համար:

Որոշեցին - Միջոցառումը ցուցադրել մինչև ապրիլի 20-ն ընկած ժամանակահատվածում և ձեռք բերել անհրաժեշտ նյութեր բեմի կահավորման համար:

2 Լսեցին.-Ընթացիկ հարցեր:

Ելույթ ունեցավ դասղեկը՝ ներկայացնելով երեխաների սանիտարական

վիճակը: Նա հրահանգեց, որպեսզի ծնողներն ուշադիր լինեն երեխաների գրենական պիտույքների, համազգեստների և հաճախումների նկատմամբ: Նշեց, որ կան երեխաներ, որոնց համազգեստները չորս տարի կրելուց հետո փոքրացել են և առաջացել է նորով փոխարինելու խնդիր: Դասղեկ Թ. Մամոնյանը հիշեցրեց, որ հունիսի սկզբին երեխաները պետք է հանձնեն գիտելիքների ստուգում մայրենիից/թելադրություն/ և մաթեմատիկայից ԳԹԿ-ի կողմից ուղարկված նմուշի համապատասխան: Դասղեկը հորդորեց, որ ծնողներն ավելի ուշադիր լինեն իրենց երեխաների ուսման հարցում:

Որոշեցին.- Լինել հետևողական, որպեսզի երեխաները պատշաճ կերպով ներկայանան գիտելիքների ստուգմանը և բարձր ցուցանիշներով այն հանձնեն: Ծնողների առաջարկով որոշեցին հրավիրել դերձակին՝ փոքրացած համազգեստների խնդիրը լուծելու համար:

Ծնողական խորհրդի նախագահ՝ /Լ. Թադևոսյան/

Քարտուղար՝ /Լ. Պապյան/